ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Մեր լեզուն» բաժնի ուսուցումը 5-րդ դասարանում

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Գիլավյան

Երևանի Վազգեն Առաջինի անվան հ.168 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 ՀԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ

1.1 Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: Հնչյունաբանություն 6

1.2 Նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծությունը, ձայնավոր հնչյուններ 11

Գլուխ 2 ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՄԱՅՔԸ

2.1 «Ասույթներ լեզվի մասին», բաղաձայն հնչյուններ 14

2.2 Ա. Բիտովի «Հայաստանի դասերը» 17

Գլուխ 3 ՆԵՐԲՈՂ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ

3.1 Գևորգ Էմինի «Մեր այբուբենը» 18

3.2 Արտադասարանական ընթերցանություն: Երկհնչյուններ 19

Եզրակացություն 21

Օգտագործված գրականության ցանկ 23

Հավելված 24

Ներածություն

5-րդ դասարանում դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, թե ինչ պատասխանատվությամբ պետք է աշխատի այդ ուսումնական տարում: 4-5-րդ դասարաններ անցումը խուճապ է աշակերտի համար, քանի որ փոխվում են դասավանդող ուսուցիչները, իրենք սովորելու են նոր առարկաներ: Շրջադարձային ու կարևոր այս փուլում մեծ է դասղեկի, նաև մայրենիի ուսուցչի դերը:

Տարրական դպրոցի պահանջները մայրենիից այլ են, մոտեցումը՝ նույնպես: «Այս տարիքում երեխան դեռևս չի ընկալում գրվածքի լեզվաոճական կամ գրականագիտական կողմերը, նա կարդում է իրեն հետաքրքրող ինչ-որ բան և կարդացածն ընկալում է ամբողջության մեջ, առանց գիտական բաժանումների: Երեխային հետաքրքրում են ոչ թե գրողը, կամ ինչպե՞ս է գրված, ի՞նչ գաղափարներ և ներքին իմաստ է դրված գրական երկի մեջ, այլ նա կարդում է՝ հաճախ անտեսելով գրվածքի հեղինակին: Լավ գործը կարող է այնքան տպավորվել, որ նրան թվա, թե ինքը մասնակից է պատմվող գործողություններին»: [1]

Ուսուցիչներս շատ լավ գիտենք խնդրո առարկան, այդ պատճառով մշակում ենք մեթոդներ, հնարներ, հետազոտում, քննարկում ու վերլուծում, վերընթերցում, հետևում նոր սերնդի պահանջներին ու պահանջմունքներին, նորանոր նյութեր հավաքագրում՝ ուսումնական տարվա ընթացքում արդյունավետ աշխատելու նպատակով: Չմոռանանք՝ փոխվում է նաև սերունդը՝նախորդից առավել տեղեկացված, ավելի հմուտ: «Մայրենիի դասընթացի հիմնական նպատակադրումները աշակերտների հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների, ինքնուրույնության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքի զարգացումն են»[2]:

Որպես հայոց լեզվի ուսուցչուհի՝ ես ևս 5-րդ դասարանում դասավանդելուց առաջ վերանայում եմ իմ դիդակտիկ նյութերը, թարմացնում թղթապանակներս,գրավոր աշխատանքների փաթեթը, փորձում գտնել նոր հնարներ, հետաքրքիր ու մատչելի ձևեր՝ անցնելիք նյութերը առավել գրավիչ ու պարզ մատուցելու համար:

---

[1] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի ՈւՁ, 5-6, Երևան, 2011թ., էջ 3:

[2] Նույն տեղում, էջ 4:

«Մայրենի 5» դասագիրքը (Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Երևան, 2015թ.) սկսվում է «Մեր լեզուն» բաժնով: Ես կարևորել եմ այդ բաժնի ուսուցումը, մի քանի տարի փորձել եմ տարբեր մեթոդներ, ուսուցման տարբեր ձևեր և հասկացել եմ, որ այդ բաժնի նյութերի հիման վրա կարելի է լավագույնս ներկայացնել հայ ժողովրդի կարևոր էջեր, փաստեր, մեր մեծերին, ազգային առանձնահատկությունները, մեր լեզվի գեղեցկությունն ու թաքնված գաղտնիքները՝ այս ամենը համատեղելով լեզվական առաջադրանքների հետ:

Այդ է պատճառը, որ հետազոտական աշխատանքի թեմա ընտրեցի իմ «որոնողահետազոտական աշխատանքը»՝ **նպատակ** ունենալով նաև կիսել իմ փորձը այն ուսուցիչների հետ, ովքեր ցանկանում են լինել տարբերվող, կրթական ոլորտում լինել նորարար, հեռու լինել կաղապարային վերլուծություններից, ունենալ ստեղծագործ աշակերտներ: **Նպատակս** է նաև իմ փորձով օգտակար լինել սկսնակ և երիտասարդ ուսուցիչներին: Այս աշխատանքով կփորձեմ հնարավորինս ներկայացնել՝ ինչ նյութեր եմ օգտագործում թեմայի շրջանակներում:

Ինձ համար կարևոր շեշտադրում է հայոց լեզվի հնարավորիս անաղարտ գործածությունը դասաժամին: Աշակերտների բանավոր հաղորդակցության խթան է նաև հայեցի խոսքը՝ զերծ օտար բառերից, շրջապատում հանդիպող սխալներից, որոնք տասնամյակներ շարունակ մնացել են մեր բառապաշարում՝ աղավաղելով հայոց լեզուն:

Մայրենիի ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում, դրա համար էլ նա պետք է լինի այդ գործընթացի անմիջական մասնակիցն ու կրողը: Այսօր, քան երբևէ, կարևոր է մայրենի լեզվին տիրապետել կատարելապես, ճանաչել հայոց մեծերին ու իմանալ նրանց պատգամները: Հիշենք բոլոր ժամանակների համար գրված խոսքը. «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Թեման արդիական է նրանով, որ 2022-2023 ուստարում դեռևս գործում է «Մայրենի 5» դասագիրքը և առաջին բաժինը կոչվում է «Մեր լեզուն»: Այդ թեմայով կրկին կարևորվում է հայոց լեզուն, որը մեր ամենօրյա հոգածության առարկան է, հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, հայի ներկան: **Արդիական** է նաև որպես մեր մայրենի լեզվի իմացություն, մեր հոգևոր հարստություն և ժառանգություն:

Վերջին երեք տարիներին մշակել եմ աշխատելաոճ, փորձարկել եմ և համոզվել, որ աշակերտը ունի մեծ սեր մայրենիի՝ հայոց լեզվի հանդեպ: Եթե խաղային մեթոդներով ենք աշխատում, առավել հետաքրքիր է դառնում լեզվի ուսուցումը: Հաջողության հասնելը, անշուշտ, մեր լեզվի հնարավորություններն են և բազում շնորհները: Որքան հայոց լեզուն հին է, այնքան նոր է ու արդիական, նոր սերնդին հավասար քայլող ու նորացող, որի միջոցով ձևավորվում է նրա լեզվամտածողությունը: Լեզուն նաև տեղեկությունների անսպառ պաշարից օգտվելու հնարավորություն է, ուսումնական առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ ընդհուպ օտար լեզուները:

«Մանկավարժ-հոգեբանների կարծիքով դեռահասն աչքի է ընկնում ուսումնական նյութի ընկալման բարձր որակներով: Նրան հրապուրում են դասի ընթացքում ինքնուրույնություն դրսևորելու հնարավորությունները, ինչպես նաև ճանաչողության հասնելու, գիտելիք ձեռք բերելու գործունեության կազմակերպումը նաև դպրոցի պատերից դուրս: Հաղորդակցական գործունեությունը շատ կարևոր է անհատականության ձևավորման համար, քանի որ ընկերների, ուսուցիչների հետ հաղորդակցման և շփման ընթացքում ձևավորվում է ինքնաճանաչողությունը: Ինքնազարգացման ձգտում, ընկերների հետ համագործակցություն և հաղորդակցում:»[3]

Ահա այստեղ անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում ուսուցչի կողմից: Այդպիսի մոտեցումով աշակերտը ակտիվ մասնակցում է դասարանական և արտադասարանական աշխատանքներին՝ իրեն կարևորված և արժևորված համարելով ուսումնական գործընթացում:

Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ այս աշխատանքին կցել եմ նաև ուսումնաօժանդակ նյութեր, որոնք օգտագործում ենք դասաժամերին և արտադասարանական հանձնարարությունների ժամանակ:

«Կարևոր է, որ սովորողները նյութը յուրացնեն ոչ միայն լսելով, այլև՝ մասնակցելով, հաղորդակցվելով, մտածելով, հարցնելով, բանավիճելով, ինքնուրույն մտքեր հայտնելով և այլն: Միայն այս դեպքում նրանց ձեռք

[3] Նույն տեղում, էջ 5:

բերած գիտելիքները կդառնան կայուն, իսկ կարողությունների և հմտությունների ձևավորումը՝ առավել արդյունավետ»: [4]

Աշխատանքի առաջին գլուխը կոչվում է «Հայի պատգամը»: Այս գլխում ներկայացրել եմ Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը և «Հնչյունաբանություն» թեման, Նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծությունը, ձայնավոր հնչյունները:

Աշխատանքի երկրորդ գլուխը կոչվում է «Հայոց լեզվի հմայքը»: Այս գլխում ներկայացրել եմ «Ասույթներ լեզվի մասին», բաղաձայն հնչյուններ, Ա. Բիտովի «Հայաստանի դասերը»:

Աշխատանքի երրորդ գլուխը կոչվում է «Ներբող հայոց լեզվին»: Այստեղ ներկայացրել եմ Գ. Էմինի «Մեր այբուբենը», արտադասարանական ընթերցանություն և «Երկհնչյուններ» թեման:

Յուրաքանչյուր դասարան ունի իր առանձնահատկությունները, յուրաքանչյուր ուսուցիչ՝ իր աշխատանքի ոճը, հետևաբար ներկայացվող աշխատանքը կարող է ուղղորդել, աջակցել ուսուցիչներին և սովորողներին: Աշխատանքում ներկայացրել եմ ոչ թե դասերի պլաններ, այլ դրանցում կիրառվող ձևերը և հնարները, նաև թեմայից թեմա անցումները:

---

[4] Գ. Մկրտչյան, Ն. Տողանյան, Մայրենի, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.,էջ 3:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ

1.1 **Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: Հնչյունաբանություն**

Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը դասագրքի առաջին դասն է, բայց մինչ այդ խոսվում է հայոց լեզվի մասին: Ի՞նչ են ասել բանաստեղծները, գիտնականները մեր լեզվի մասին, նաև մանուկները իրենց թոթով լեզվով ինչպե՞ս են փառաբանում: Որպես մուտքի դաս՝ նպատակահարմար եմ գտնում դասն անցկացնել բանաստեղծուհու տուն-թանգարանում: Փորձել եմ և համոզվել, որ արդյունավետ տարբերակ է: Նախապես պայմանավորվելով՝ թանգարանի աշխատակցին խնդրեցի, որ էքսկուրսիայի վերջում երեխաները կրթական ծրագրով նախատեսված էջանիշներ պատրաստեն: Համապատասխան նյութերը ընտրել էի նաև ես, օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի նկար, տառեր, որոնք օգտագործելու են էջանիշների համար:

Մեր առաջին հանդիպումը եղավ թանգարանում, որտեղ ծանոթացանք իրար հետ՝ գործածելով հետևյալ մեթոդը. «Ասա՛ անունդ և քեզ բնորոշող մի բառ, որը սկսվում է քո անվան առաջին տառով»[5]: Բավականին ջերմանում են երեխաները այս մեթոդից հետո:

Էքսկուրսիան մատչելի ու հասանելի պետք է լինի, ավելի շատ Կապուտիկյան-մայր կերպարի մասին պետք է խոսվի և նրա միակ որդու՝ Արա Շիրազի մասին: Էքսկուրսիայի ավարտը թանգարանի հայտնի պատի մոտ է՝ «Խոսք իմ որդուն» հատվածում: Նշեմ, որ աշակերտները դեռ ծանոթ չեն «Խոսք իմ որդուն» ստեղծագործությանը, բայց ստացած տեղեկությունները բավարար են մայրենիի դասագրքի համար էջանիշներ պատրաստելուն: Կրթական ծրագրի շրջանակում նախատեսված էր էջանիշներ պատրաստել: Այդ աշխատանքի համար տրվում է հստակ հանձնարարություն. էջանիշի վրա գրել մայրենիին գովերգող բառեր ու նախադասություններ, խորհուրդ ընկերոջը, թե ինչպես սովորի, ինչու սովորի հայոց լեզուն, նկարազարդել էջանիշը, փակցնել նկարներ: Թանգարանում սովորել երկի վերջին քառատողը.

---

[5] Ժաննա Հարությունյանի ներկայացրած մեթոդներից, «Տաթև»,Վերապատրաստում, 2022թ.:

Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ւր էլ լինես, այս լուսնի տալ ո՛ւր էլ գնաս,

Թե մորդ անգամ մտքից հանես, քո մա~յր լեզուն չմոռանա՛ս:

Նշում եմ, որ բանաստեղծությունը սովորելու և մեկնաբանելու ենք դպրոցում: Ամփոփիչ հարց ու պատասխանով ավարտում ենք էքսկուրսիան:

Հաջորդ դասին վերհիշում ենք՝ նախորդ հանդիպմանը ինչ սովորեցինք, ինչ իմացանք, այնուհետև ընթերցում ենք «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը, բացատրում նորածանոթ բառերը: Ուշադրություն ենք դարձնում ***պատգամ*** բառին:

Պատգամ- առաջնորդի կամ հիմնադրի կողմից հետնորդներին տրված ավանդ, կտակ,պատվեր:

Ուղղորդող հարցերով փորձում ենք գծել մի ուղի, որի վերջնարկին հստակ կձևակերպենք. «**Կարո՞ղ է սա լինել յուրաքանչյուր հայի համար պատգամ**»:

Աշակերտներիս մոտ մի հենակետային միտք փորձում եմ կարևորել. այն է՝ յուրաքանչյուր խոսք ասելիս հիմնավորել: Այդպես նրանց մոտ ձևավորվում է վերլուծական միտքը, արժեքային համակարգը, կարծիք ունենալն ու այն ներկայացնել կարողանալու հմտությունը:

Վերջնարդյունք

Աշակերտը հաճույքով է աշխատում, սովորում *պատգամ* բառի նշանակությունը, ստեղծագործության գաղափարը վերհանում, կարծիք հայտնում: Լեզուն իր համար դարձնում է արժեք: Վերհիշում է հնչյուն և տառ հասկացությունները, ձևակերպում է սահմանումներ: Լիցքաթափվում է խաղալով, սովորում է խաղալով:

Իմ նպատակը աշակերտի վերլուծական մտքի և բանավոր խոսքի զարգացումն էր, պատմական կարևոր փաստերի իմացությունը, միջառարկայական կապերի ստեղծումը:

Ներկայացնեմ բանաստեղծական տողերը և դրանց մեկնաբանությունները: Այսպիսով՝ մեր վերլուծությունը այսպիսին է: Ըստ էության՝ սա Քորնելի գրառումների մեթոդն[6] է: Աղյուսակը կներկայացնեմ հավելվածում:

---

[6] Թամար Ալեքսանյանի ներկայացրած մեթոդներից «Տաթև»,Վերապատրաստում, 2022թ.:

Մայրը որդուն հորդորում է լսել իր սրտի խոսքը՝ որպես պատգամ: Նա ավանդում է հազարագանձ հայոց լեզուն և հիմնավորում է դրա կարևորությունը:

Կտրել է նա հանց աստղալույս, երկինքները ժամանակի,

Շառաչել է խռովահույզ սլացքի հետ հայկյան նետի:

Հայոց լեզուն եկել է հազարամյակների խոսքից, հին ժամանակներից, Հայկն է խոսել այդ լեզվով և իր նետի սլացքը ուղղել դեպի գալիք սերունդ: Այստեղ հիշում ենք «Հայկ և Բել» առասպելը, Հայկից էլ մեր ժողովրդի անվանումն է ծագել՝ հայ, մեր երկիրը՝Հայաստան, մեր լեզուն՝ հայերեն:

Սա կարծես հղում է աստվածաշնչյան խոսքին՝ «□ □□□□□□□□ □□ □□□□»: Խոսքի զորությունը մեր աղոթքներում է երևում: Խոսքը հետո պիտի դառնա գիր, այսինքն՝այբուբեն, հետո դառնա մագաղաթ՝գիրք:

Ի դեպ այդ գաղափարը կա նաև Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի», Նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծությունների մեջ:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ **բառն** եմ սիրում...

Չե~մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր **գրքերը** մեր...

(Ե.Չ.)

Նա առաջին **կանչն** է եղել դյուցազնական մեր նախահոր...

Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն...

(Ն.Զ.)

Այս մասին խոսվելու է նաև Ն. Զարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծության ուսուցման ժամանակ և արտադասարանական նյութերի գրքույկով աշխատելիս: [7]

Ու Մեսրոպի սուրբ հանճարով դարձել է գիր ու մագաղաթ,

Դարձելէ հո՛ւյս, դարձել դրո՛շ, պահել երթը մեր՝ անաղարտ:

---

[7] Տե՛ս հավելվածում:

Մաշտոցի հանճարի երկունքն է հայոց լեզուն, դրոշն է, որ պարզել ենք մեր ճանապարհին հույսի դրոշը:

Նրանով է մրմնջացել հայ պանդուխտը վերքն իր սրտի,

Նրանո՛վ է որոտացել կռվի երգն իմ ժողովրդի:

Հայ պանդուխտը օտար հողում խեղճ է, իր մայրենի լեզվով բարձրաձայն չի կարող խոսել, որ չիմանան՝ օտար է: Դրա համար նա մրմնջում է մայրենի լեզվով: Իսկ իր հողի վրա և իր երկրում որոտաձայն երգում է, կռվի ժամանակ բարձր ձայնով է կանչում հային: Հայրենիքում ապրող հայը հայոց լեզվով ռազմի երգեր է երգել հայրենիքի մասին, պայքարի է դուրս եկել հայրենիքի համար:

Նրանով է մայրս ջահել ինձ օրորոց դրել մի օր,

Հիմա եկել, քե~զ է հասել նրա կարկաչը դարավոր:

Հայ մայրերը զավակի ծնված օրից օրորոցային երգեր են երգել: Մեր մայրերի լեզուն է հայերենը, մոր պես սրբացվել է, համեմատվել Արարատի հետ: Ահա այս արժեքներն է փոխանցում մայրը որդուն: Դ Դժվարություններ է հաղթահարել լեզուն, օրհասական օրերին է փրկել մեզ հայոց լեզուն, դրա համար պետք է այն պահենք Արարատին ու նախնիների աճյուններին հավասար: Եթե թշնամին փորձի սուր քաշել լեզվի վրա, պարտավոր ես քեզնով պաշտպանել լեզուն:

Թող մանկանա քո շուրթերին մեր ալեհե~ր հայոց լեզուն…

Ամեն մանկան հետ մեր հնամենի լեզուն նորանում է, մանկանում: Դրա վառ ապացույցը երեխան կարող է բացատրել իր օրինակով, իր փոքր եղբոր կամ քրոջ օրինակով: Թոթովախոս մանկան շուրթերից հնչող խոսքը անուշ է ու քաղցր, նոր է ու թարմ:

Ու ոսոխի զարկիցը սև դու պաշտպանի՛ր կրծքով նրան,

Ինչպես մորդ կպաշտպանես, թե սո՛ւր քաշեն մորդ վրա:

Սիլվա Կապուտիկյանը այս բանաստեղծության մեջ ծայրահեղության հասցնող միտք է ասում:

Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ւր էլ լինել, այս լունի տակ ո՛ւր էլ գնաս,

Թե մորդ անգամ մտքից հանես, քո մա~յր լեզուն չմոռանա՛ս...

Մայրը բնազդով անգամ պաշտպանում է իր զավակին, ինչպես ասում են, անգամ այն աշխարհում, ու եթե որդին մոռանա մորը, ով արդեն ֆիզիկապես չի լինի (թե սուր քաշեն մորդ վրա), չմոռանա իր ինքնությունը, իր ազգությունը, իր հայ լինելը:

Մոր պատգամը փոքրիկ որդուն՝ Արային է ուղղված: Բանաստեղծուհին մի առիթով ասել է, թե իր այնքան ստեղծագործությունների մեջ ինչու է հենց այս ստեղծագործությունը սիրվել առավել և արտասանվում է ողջ սփյուռքում.չէ՞ որ նա իր զավակի համար է գրել, երբ թոթովախոսում էր, նոր էր սկսել խոսել:

Կարծում ենք, որ դրա պատճառը հայ մայրն է, ով բոլոր հայերին է ավանդում հոգևոր միակ հարստությունը՝ լեզուն: Այստեղ տեղին է ընթերցել Վիկտոր Համբարձումյանի հայտնի կտակից մի հատված:

«Կտակում եմ.

Ինձ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս, բոլորին տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինել՝անկախ նրանից՝ ինչպիսի տոկոս է կազմում նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում:

Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և այդ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզուն: Գիտցի՛ր, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կմա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը»:[8]

Ցանկալի է երաժշտության ուսուցչի հետ համագործակցել, որպեսզի աշակերտները երգեն նաև «Խոսք իմ որդուն» երգը: Եթե չկարողանան երգել, պարտադիր երգը լսեն դասարանում:

[8] https://www.facebook.com/antaresmediaholding/posts/1526971864021320/

Դասի ամփոփման փուլում կիրառում ենք «Կենսագրական բանաստեղծություն»[9] մեթոդը՝ հարմարեցնելով մեր ստեղծագործությանը: Հայոց լեզվի կենսագրությունն ենք գրում:

Ես ----------

Ազգանունս----------

Բնակվում եմ ----------

Արտաքինս ----------

Բնավորությունս ----------

Ուզում եմ տեսնել----------

Կարիք ունեմ ----------

Զգում եմ ----------

Վախենում եմ ----------

Այսքանից հետո միայն հանձնարարվում է անգիր սովորել «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: Դասագրքում իր պատվավոր տեղն է զբաղեցնում աշակերտի պատրաստած էջանիշը: Դասի վերջում կատարվում է անդրադարձ:

Հաջորդ դասին բանաստեղծությունը անգիր արտասանելուց հետո բառային աշխատանք ենք կատարում: Հետո ուղղորդում եմ ուշադրություն դարձնել այն տողին, որտեղից սկսել ենք նախորդ դասը: Աստվածաշնչյան խոսքից ենք սկսում՝ ի սկզբանե էր բանը՝ բառը: Բառը կազմված է հնչյուններից: Գրատախտակին գրում եմ հնչյուններ և առաջարկում բառեր կազմել: Օրինակ՝ **տագպմա, կկրաաչ,ոշրդ,բսրու** և այլն:

Կազմում են պատգամ, կարկաչ,դրոշ, սուրբ և այլ բառեր:

Առաջադրանք

Պատկերացրեք Հայկ նահապետը ձայն է տալիս իր որդուն. ի՞նչ հնչյուններով կամ բառերով կխոսեր:

---

[9] Ժ. Հարությունյանի ներկայացրած մեթոդներից,«Տաթև»,Վերապատրաստում, 2022թ./:

Այսպես կարելի է սկսել «Հնչյունաբանություն» բաժինը: Ներկայացնում ենք հնչյուն, տառ հասկացությունները, միասին վերհանում սահմանումները: Խաղում ենք «Ձայնավորների ընտանիք», այսինքն՝ կազմում ենք նախադասություններ, որտեղ լինեն միայն միևնույն ձայնավորով սկսվող բառեր (անվանումը որոշել ենք աշակերտների հետ): Օրինակներ՝

Արփինեն, **Ա**նին, **Ա**ննան, **Ա**նուշը **ա**րագ **ա**սում էին **ա**սույթներ:

Իսահակը **ի**սկույն **ի**ջավ **ի**ջևանատնից:

Ուղտը **ո**ւրիշ **ու**լունք **ու**զեց **ո**ւղտայծից:

Այս հնարքը կիրառում ենք նաև այն ժամանակ, երբ ընթերցում ենք Վաչագան Սարգսյանի «Արմանք-զարմանք այբբենական ընթերցարանը»: Ահա մեկ օրինակ:

«Օրին օդակայանում օրապահ է: Օդանավի օդանցքներից օդը օդամղիչով օդահանում է, օդանավը օդափոխում: Օհանը օրինակելի օդաչու է, օգնում է Օրիին»:[10]

Օրինակները շատ են, այսպես աշխատում ենք, նշում ձայնավոր տառերը, է(ե), օ (ո) տառերի մասին ենք խոսում: Ե, ո տառերը կարծես ***է,օ-ի*** մականունները լինեն:

Այսպիսով՝ձևակերպում ենք՝ ինչ է ձայնավորը: Հայերենի այբուբենում կա 6 ձայնավոր հնչյուն, որոնք գրվում են 8 տառով: Այսպես՝ ա, ի, ու, ը, է(ե), օ(ո): Անպայման նշել և վարժություններ կատարել հնչյունների և տառերի անհավասարության մասին: Օրինակ՝ (սըրտի)- սրտի, (արէվ)-արև, (յէխպայր)-եղբայր, (վօր)-որ և այլն:

Կիրառում եմ նաև «Զգացմունքներ և ձայներագներ» խաղը[11]: Այս կերպ աշխատելով՝աշակերտները հաճույքով են սովորում:

1.2 **Նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծությունը, ձայնավոր հնչյուններ**

---

[10] Վ. Սարգսյան, «Արմանք-զարմանք այբբենական ընթերցարան», Երևան, 2013թ., էջ 40:

[11] Կլաուս Ֆոպել, Դադարի էներգիան (խմբ.՝Թ. Ալեքսանյան),Վերապատրաստման նյութեր, էջ 5:

Նաիրի Զարյանի մասին մի քանի խոսք ներկայացնելուց հետո կարդում ենք «Հայոց լեզուն» բանաստեղծությունը, բացատրում նորածանոթ բառերը: Ինչպես նախորդ դասին, այս դասին ևս ներկայացնում ենք ստեղծագործությունը Քորնելի գրառումների մեթոդով: Մեկնաբանություններին զուգահեռ համեմատում ենք, նաև գտնում տարբերությունները «Խոսք իմ որդուն» ստեղծագործության հետ: Աշխատանքի նմուշ-աղյուսակը՝ ներքևում:

Վերջնարդյունք

Առոգանությամբ ընթերցում, կարծիքի ձևակերպում, վերլուծում, համեմատում, կրկնություն:

Այս ամենով ամրապնդում ենք ստացած գիտելիքները:

Այս ստեղծագործության հեղինակը կոչ է անում եղբորը (կամ էլ պարզապես հայ երիտասարդին) փառաբանել հայոց լեզուն, քանի որ այն մեր **արյունն** է,մեր **զենքն** է, մեր **մշակույթը**:

Մեր **սրտի ջուր**, մեր **ձեռքի թուր**, մեր **հոգու լար** հայոց լեզուն:

Հայոց լեզուն դարեր է անցել ու կենդանի է մնացել, հոսել է Արաքս գետի հետ:

Հոսելէ նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,

Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն:

Քերթողահայր Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ՝ հայոց լեզուն:

«□ □□□□□□□□ □□ □□□□» խոսքին համարժեք բանաստեղծության մեջ ընդգծում ենք.

Նա **առաջին կանչն** է եղել դյուցազնական մեր նախահոր,

Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:

Օրորոցայինների մասին ենք խոսում, համեմատում նախորդ ստեղծագործության հետ: Ոսոխներն են փորձել մեր երթը կրկին խաթարել,

չի հաջողվել, մեր լեզուն լույս է տվել ու փրկել խավար գիշերներից, այսինքն՝ Մաշտոցի սուրբ հանճարի շնորհիվ մենք փրկվել ենք ձուլումից:

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,

Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն:

Բանաստեղծության վերջին երկտողում հեղինակը դարձյալ կոչ է անում, որ եղբայրը գովերգի մեր լեզուն, գործածեն այն իր բոլոր հնարավորություններով, որ հավերժ փայլի գործածվող սրի պես. այն չպահեն պատյանում, այլ գործածեն:

Ուրեմն ե՛կ փառաբանենք, փայլեցնենք թրի նման,

Որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն:

Կիրառեցինք արդյունավետ մեթոդներից Քորնելի գրառումների մեթոդը:

Ամփոփման փուլում լրացնում ենք աղյուսակը ըստ նմուշների:

Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն»	Ն. Չարյանի «Հայոց լեզուն»
Նմանություններ	
Լեզվի մասին է:	Լեզվի փառաբանումն է:
լուսնի տակ	արևի տակ
Տարբերություններ	
Որդի	եղբայր
լսի՛ր	արի՛

Այս վերլուծությունից հետո հանձնարարվում է՝ ինչպիսի երաժշտություն է համապատասխանում այս բանաստեղծությանը: Դասի վերջում կատարվում է անդրադարձ:

Հաջորդ դասի համար բանաստեղծությունը սովորել անգիր:

«Ն. Չարյանի «Հայոց լեզուն» բանաստեղծությունը անգիր արտասանել, բառային աշխատանք կատարել: Հնչյունների մասին ենք խոսում, արտասանում դրանք, ձայնավորներով կատարում ենք «Ծիծաղի յոգա»[12]:

Ինչպես նշել եմ, մենք ունենք լրացուցիչ, արտադասարանական նյութերի գրքույկ[13]: Այս դասին կարդում ենք Եղիշե Չարենցի «Մեր լեզուն», խոսում լեզվի կոպտության, կոշտության, միաժամանակ մեղմության մասին: Աղյուսակ լրացնում:

Մեղմ բառեր	Խիստ բառեր

Կատարում ենք բառային աշխատանք և դասագրքից վարժություններ էջ (9):

Առաջարկում եմ քարտային աշխատանք, որը լիցքաթավում է աշակերտներին: Յուրաքանչյուր դասին վերաբերող մեկ բառ կամ թեմայի անուն է գրվում քարտի վրա: Ծրարի մեջ դրանք հավաքում ենք ու պարբերաբար գործածում, որը և՛ լիցաթափում է, և՛ սովորեցնում: Աշակերտը վերցնում է որևէ քարտ և արագ պատասխանում: Օրինակ՝ եթե քարտի վրա գրված է **հնչյուն**, արագ ասում է՝ ինչ է հնչյունը: Եթե գրված է ստեղծագործության վերնագիր, ապա գործածում ենք «Ճամպրուկ, զամբյուղ, մսաղաց»[14] մեթոդը:

Գլուխ 2

---

[12] Թամար Ալեքսանյանի ներկայացրած մեթոդներից, «Տաթև», Վերապատրաստում, 2022թ.:

[13] Տե՛ս հավելվածում:

[14] Ժ. Հարությունյանի ներկայացրած մեթոդներից, «Տաթև»,Վերապատրաստում, 2022թ.:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՄԱՅՔԸ

2.1 **Ա.Բիտովի «Հայաստանի դասերը», «Ասույթներ լեզվի մասին», բաղաձայն հնչյուններ**

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացնում եմ Ա.Բիտովի «Հայաստանի դասերը», «Ասույթներ լեզվի մասին», բաղաձայն հնչյուններ:

Հակիրճ ներկայացնում եմ Ա. Բիտովի և իր գրած գրքի մասին: Դասին կիրառում ենք «Տեքստի ուսումնասիրումն ըստ մոդալության»[15] մեթոդը:

Վերջնարդյունք

Դասակարգել անհատական զգայական ընկալումներն ըստ տեքստի:

Տեքստում գտնել և խմբավորել պատկեր, ձայն, զգացողություն նշող բառերը և բառակապակցությունները:

Պարզաբանել տեքստի բառերը և բառակապակցությունները:

Սովորողի ինքնուրույն աշխատանք: Առաջադրանքներ ըստ մոդալության:

Սովորողի լեզվամտածողության, պատկերավոր մտածողության, երևակայության զարգացում:

Կիրառվում է ***ԽԻԿ*** համակարգ:

Խթանում

Ի՞նչ է **դաս**ը (բառի բացատրությունը), քանի՞ իմաստ ունի: Փորձել կռահել, թե որ իմաստով է կիրառվել այստեղ:

Իմաստավորում

Տեքստի ընթերցում, անհատական զգայական ընկալման ներկայացում աղյուսակով(աղյուսակ 1)

ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ (Տեսողական ընկալում)

---

[15] Թամար Ալեքսանյանի ներկայացրած մեթոդներից, «Տաթև»,Վերապատրաստում, 2022թ.:

Աշակերտները գրում են իրենց տեսած պատկերները, որոնք ծնվել են տեքստը կարդալու ընթացքում, ապա կարդում են իրենց գրածները, ներկայացնում լսարանին:

ԵՍ ԼՍՈՒՄ ԵՄ(Լսողական ընկալում)

Աշակերտները գրում են իրենց լսած ձայները, որոնք ծնվել են տեքստը կարդալու ընթացքում, ապա կարդում են իրենց գրածները, ներկայացնում լսարանին:

ԵՍ ԶԳՈՒՄ ԵՄ (Մարմնաշարժողական ընկալում)

Աշակերտները գրում են իրենց զգացողությունները, որոնք ծնվել են տեքստը կարդալու ընթացքում, ապա կարդում են իրենց գրածները, ներկայացնում լսարանին:

Աղյուսակը լրացնում են և ընթերցում իրենց գրառումները: Աղյուսակը՝ ստորև:

Կշռադատում

Դասարանը բաժանվում է 4 խմբի, ամեն մեկը ստանում է համապատասխան առաջադրանքը:

Խումբ 1

Ո՞ւմ է պատմում	Ե՞րբ է պատմում

Խումբ 2

Ի՞նչ գույներ ես տեսնում	Ի՞նչ ձայներ ես լսում

Խումբ 3

Ի՞նչ մեղեդի է հնչում ձեր մտքում	Ո՞ր բառերն են նորածանոթ

Խումբ 4

Ինչե՞ր է հիշեցնում ծով բառը	Ո՞ր հնչյուններն են կրկնվում:

Անդրադարձ

ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ արեցինք այսօր:

Կարելի՞ է ասել, որ տեքստը նկարի պես է կամ հնչում է որպես երաժշտություն:

Ինչի՞ կամ ինչերի՞ շնորհիվ է ապահովվում պատկերը, գույնը, ձայնը, քո զգացողությունը:

Հայերեն ո՞ր բառն էր այսօր քեզ համար նորություն:

Ո՞ր բառը չես մոռանա, ո՞ր բառը քեզ շատ դուր եկավ:

Այսօր դու ի՞նչը լավ արեցիր, ի՞նչ կարողացար անել:

Գրում ենք բաղաձայնները, միասին սահմանում՝ ինչ է բաղաձայնը: Փորձում ենք արտաբերել առանց խոչընդոտի, չի ստացվում, ինչպես ձայնավորն էր: Չի ստացվում կիրառել «Ծիծաղի յոգան»: Նշում ենք հնչյունների տեսակները, նրանց տարբերությունը:

Գրատախտակին գրում ենք եռաշարք, երկշարք և մնացյալ բաղաձայնները, և-ի մասին հիշեցնում ենք, որ ո՛չ բաղաձայն է, ո՛չ ձայնավոր: Հայերենի այբուբենը ունի 30 բաղաձայն:

Բ-Պ-Փ	Զ-Ս, Ժ-Շ	Լ
Գ-Կ-Ք	Ղ-Խ	Յ
Դ-Տ-Թ	Ն-Մ	Հ
Ձ-Ճ-Ց	Ր-Ռ	

Ջ-Ճ-Չ	Վ-Ֆ	

Այստեղ տեղին է ընթերցել մի քանի պատմություն «Արմանք-զարմանք»-ից[16]: Դրանք ոգևորում են աշակերտներին, անգամ փորձում են ինքնուրույն օրինակներ կազմել:

Բաղաձայնները սովորելիս անպայման գրում ենք կենդանիների արձակած ձայները:

Գրում ենք «Բառքամոցի» *ամպրոպաշունչ, հազարագանձ* բառերով:

Բաղաձայնների ամփոփման դասին կարելի է կիրառել «Արտասովոր պատմություն» խաղը[17]:

Անպայման ստեղծագործական աշխատանք հանձնարարել դասարանում(10-րոպեանոց շարադրանք) դասագրքից, (էջ 11, տեքստային աշխատանք հ.4):

2.2 **Ա. Բիտովի «Հայաստանի դասերը»**

Կարդալ Անդրեյ Բիտովի «Հայաստանի դասերը»: Քննարկել, թե օտարը ինչպես է ընկալել հայերենը: Աշակերտները միմյանց հարց են տալիս դասի շրջանակում: Այստեղ կիրառում ենք «Հարց ընկերոջը» հնարքը. աշակերտները միմյանց հարց են տալիս իրենց կարդացած նյութից:

Անպայման խոսել ռուսերեն-հայերեն բառերի թարգմանություններից, անդրադառնալ այն տառերին, հատկապես բաղաձայն, որ չկան ռուսերենում, բայց կա հայերենում, և հակառակը: Կարդալ «Ճագարն ու ճանճը»[18], «Ձուրը»[19]:

Նշեմ, որ նախորդ դասին Ա. Բիտովի «Հայաստանի դասերը» գրքի բնագիրը՝ռուսերեն տարբերակը, ցուցադրել եմ, աշակերտները կարդացել են հատված Մատենադարանի մասին: Այս դասին վերհիշում ենք, թե ինչպիսի

---

[16] Վ. Սարգսյան, «Արմանք-զարմանք այբբենական ընթերցարան»,Երևան, 2013թ., էջ18-22:

[17] Կլաուս Ֆոպել, Դադարի էներգիան (խմբ.՝Թ. Ալեքսանյան), 2022թ., էջ 19: Տե՛ս հավելվածում:

[18] Վ. Սարգսյան, «Արմանք-զարմանք այբբենական ընթերցարան», Երևան, 2013թ., էջ 22:

[19] Վ. Սարգսյան, «Արմանք-զարմանք այբբենական ընթերցարան», Երևան, 2013թ., էջ 30:

հիացմունքով է գրել Մատենադարանի մասին օտարազգի գրողը: Այստեղ ստեղծվում է միջառարկայական կապ: Կարևորում եմ բնագրային ընթերցանությունը:

Ընթերցանության գրքույկից կարդում ենք Հ. Շիրազի «Հայոց լեզուն» բանաստեղծությունը, մեկնաբանում, «բաբելոնյան ժխոր» արտահայտությունը բացատրում, որ այն գալիս է Աստվածաշնչից: Այդ պատմությունը կարդում են աշակերտները իրենց համար բերված դասագրքից[20]: Պատմում են և մեկնաբանում:

«Մայրենի 5» դասագրքից վարժություն գրելիս անդրադարձել ենք հայ գրողների ասույթներին, որ մայրենի լեզվի մասին են: Ահա այդպիսի ասույթներ ենք կարդում (էջ 13): Բոլոր ասույթների նորածանոթ բառերը բացատրում ենք, քննարկում Հ. Թումանյանի խոսքը, որտեղ մեր լեզուն անվանում է ազգի համար դրոշմ: Հարցեր աշակերտներին:

Ի՞նչ պատկերով դրոշմ կստեղծեիք հայերի համար, ի՞նչ խորհրդանիշ կընտրեիք Հայաստանի համար բացի եռագույնից ու զինանշանից:

Դասի այս հատվածում կատարում եմ անդրադարձ:

Լրացուցիչ նյութերի գրքում ևս կան ասույթներ (էջ 29-30): Դրանք հանձնարարվում են կարդալ տանը՝ հաջորդ դասին քննարկելու համար:

Գլուխ 3

ՆԵՐԲՈՂ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ

3.1 **Գ. Էմինի «Մեր այբուբենը»: Երկհնչյուններ**

Երբ հայոց լեզվի մասին ասույթները կարդում և մեկնաբանում ենք, առաջարկում եմ գրել ակրոստիքոս՝ ծայրակապ: Աշակերտները գրում են ՄԱՇՏՈՑ, ՄԵՍՐՈՊ, ՀԱՅԵՐԵՆ, ԱՅԲՈՒ ԲԵՆ, ԼԵԶՈՒ բառերով ծայրակապեր: Ահա դրանցից մեկ օրինակ:

Լեռներով անցել, հասել գագաթին,

Երկնքից իջել, դարձել ես արքա:

---

[20] Ռ. Սարուխանյան, Գրականություն 4, Երևան, 2002թ., էջ 57:

Զինվորն ես դարձել հայոց բանակի,

Ուղեցույցն ես դու համայն հայերի:

Աշակերտների ստեղծագործական աշխատանքը լսելուց հետո առաջարկում եմ կարդալ Գևորգ Էմինի «Մեր այբուբենը» բանաստեղծությունը, որը ծայրակապ է: Կարդում ենք, կատարում բառային աշխատանք, նորածանոթ բառերով կազմում նախադասություններ:

Պարտադիր եմ համարում աշակերտների համար կարդալ հայտնի այբուբեն-ծայրակապը՝

Արարիչ

Բովանդակ

Գոյության

Դատավոր..... և այլն

Ներկայացնում եմ այբուբենի գաղտնիքներից և հանձնարարում հետազոտել, փնտրել մեկ գաղտնիք: Մեկ գաղտնիք էլ աշակերտները մտածեն մեր այբուբենի համար: Լրացուցիչ հանձնարարություն տալ՝ գրել տեղեկություն Տառերի պուրակի մասին:

Ուղղորդող հարցով վերհանում ենք, որ ասույթներից բացի կան ասացվածքներ,առածներ և դարձվածքներ: Գրում ենք և մեկնաբանում, բացատրում իմաստները: Ահա մի քանիսը.

Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:

Երկար լեզուն կարճացնում է կյանքը:

Ցորեն հաց չունես, ցորեն լեզու ունեցիր:

Լեզու գտնել, լեզուն շաղ տալ, լեզվից թույլ, լեզվի ծայրին և այլն:

Հանձնարարվում է ***լեզու*** բառով գրել 10- ական առած-ասացվածք և դարձվածք:

Դասի այս հատվածում կատարել անդրադարձ:

3.2 **Արտադասարանական ընթերցանություն: Երկինչյուններ**

Հերթական դասին կարդում ենք բանաստեղծությունը, բառարանային աշխատանքը, կարդում գրված առածները, ասացվածքները, դարձվածքները, լրացուցիչ տեղեկությունը: Նշում ենք այն, ինչ կապված է Մաշտոցի անվան հետ՝ մեսրոպյան այբուբեն, մաշտոցյան գիր, Մաշտոցի անվան Մատենադարան, պողոտա, դպրոցներ և այլն: Ընթերցանության գրքույկից կարդում ենք Խ.Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպից հատված[21]: Արտասանում ենք հայոց այբուբենը տառանվանումներով: Մեկնաբանում ենք, կարծիքներ հայտնում, շարունակում ենք գրքույկի մյուս երկերն էլ կարդալ:

«Մայրենի լեզու» բաժնի ստեղծագործությունները նվիրված էին հայոց լեզվին: Դրանցում փառաբանվում է մեր մայրենի լեզուն, նրա հարստությունն ու ճոխությունը, նրա ճկունությունը, մեղմությունն ու կոշտությունը: Այսպիսի գովաբանական չափածո ստեղծագործությունները կոչվում են ***ներբող*** : «Գովաբանական կամ փառաբանական բովանդակություն ունեցող բանաստեղծություն՝ նվիրված որևէ նշանավոր անձի կամ իրադարձության, կոչվում է ներբող»[22]: Ուրեմն կարող ենք ասել, որ այս բաժնի ոտանավորները ներբողներ են հայոց լեզվին: Ներբող է նաև Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» երկը: Աշակերտները պետք է կռահեն, որ այն հայրենիքի մասին ներբող է:

Այնուհետև անդրադառնանում ենք «Երկինչյուններ» թեմային:

Հանձնարարություն

Նախորդ դասերից դուրս գրել յ բաղաձայն ունեցող 10 բառ:

Աշակերտները գտնում են և գրում գրատախտակին՝ աստղալույս, աճյուն, մայր,մայրաբար, փայփայել, հայի, այբուբեն,անմատույց, փրկության, անհայտում:

---

[21] Տե՛ս հավելվածում:

[22] Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1972թ., էջ 206:

Նկատեցինք, որ յ-ն միշտ ձայնավորի հետ է լինում, այդ պատճառով կոչվում է նաև ***ձայնակապ***:

Միասին վերհանում ենք երկհնչյունի սահմանումը, գրում հայերենի երկհնչյունները, ուշադրություն դարձնում կարմիրով ընդգծված վերոնշյալ բառերին: Հստակեցնում ենք, որ 2 ձայնավորի միջև յ-ն հաջորդի հետ է երկհնչյուն կազմում: Կատարում ենք վարժություններ երկհնչյունների շուրջ: «Մեր լեզուն» բաժնի ամփոփիչ էջում խոսվում է տեքստի մասին: Մենք աշխատանքում չենք ներառել այդ նյութը, սակայն հակիրճ նշեմ, որ յուրաքանչյուր բանաստեղծություն անցնելիս անպայման անդրադառնում ենք, որ այն չափի մեջ է, չափի է բերված, անգամ համեմատում ենք չափածո տեքստերը, նշում նրանց տարբերությունները : «Հնչյունաբանություն» բաժնի բոլոր նյութերը արձակ են, ազատ, դա էլ արձակ տեքստն է:

Մի քանի նախադասություններ, որոնք մեկ նյութի մասին են, միանալով կազմում են տեքստ[23]:

Որպես թեմայի ամփոփում՝ հանձնարարվում է գրել շարադրություն՝ «Իմ մայր լեզու» վերնագրով՝ գործածելով թեմայի ընթացքում սովորած նյութերից այն, ինչը կարևորել են աշակերտները:

---

[23] Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան,Մայրենի 5, Երևան, 2015թ., էջ 19:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքում ներկայացված է «Մեր լեզուն» բաժնի ուսուցումը 5-րդ դասարանում: Այդ դասարանում սովորողների տարիքային առանձնահատկությունները և հետաքրքրությունները հաշվի առնելով՝ ներկայացված են մեթոդական հնարներ, որոնք ուսուցչի կողմից արդեն փորձարկվել ենք: Քանի որ փորձարկումը հաջողություն է ունեցել, այդ պատճառով նպատակահարմար ենք գտել ներկայացնել որպես հետազոտական աշխատանքի թեմա:

Հետազոտական աշխատանքի արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ հիմնական եզրակացություններում:

1) Մայրենիի ուսուցումը բացառիկ նշանակություն ունի անհատի բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորման գործում: Հայոց լեզուն մեր ամենօրյա հոգածության առարկան է, հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, հայի ներկան: Աշխատանքում շեշտադրվում է հայոց լեզվի անաղարտ գործածությունը՝ զերծ օտար բառերից:

2) Լեզուն նաև տեղեկությունների անսպառ պաշարից օգտվելու հնարավորություն է, ուսումնական առարկաների ընկալման և յուրացման նախադրյալ ընդհուպ օտար լեզուները:

3) Աշխատանքում ներկայացրել ենք ոչ թե դասերի պլաններ, այլ դրանցում կիրառվող ձևերը և հնարները, նաև թեմայից թեմա անցումները:

4) Արդի ուսուցման համար ներկայացվող նորանոր մեթոդները, ըստ էության, նախկինում կիրառվող ձևերի որոշակի փոփոխված տարբերակներն են: Պարզապես անընդհատ գործածվելիս մասնակի փոփոխությունների են ենթարկվում՝ հարմարեցնելով դասարանի սովորողների հետաքրքրություններին ու կարողություններին:

5) Այս աշխատանքը ուսուցչի հետազոտական-վերլուծական աշխատանք է՝ ուղղված օգնելու սկսնակ և երիտասարդ ուսուցիչներին և այն մանկավարժներին, ովքեր քերականական վարժություններից զատ կարևորում են սովորողների ստեղծագործական միտքը:

6) Աշխատանքի հավելվածում դրված են որոշակի նյութեր, որ գործածվում են դասաժամին կամ որպես տնային հանձնարարություն:

7) Թեմաները ներկայացված են իրենց վերջնարդյունքներով, ինչպես նաև Բլում-Անդերսոնի աստիճանակարգի սկզբունքով.

- Ստեղծել (հորինել, ստեղծագործել, դեդուկցիայի մեթոդի կիրառում)
- Գնահատել,արժևորել (տեքստային աշխատանք ըստ մոդալության)
- Վերլուծել, կիրառել (ստեղծագործական աշխատանք)
- Ըմբռնել (ստեղծագործական աշխատանք)
- Համադրել(աղյուսակի կազմում, հարցադրում)
- Մտապահել(տեսական նյութի բանալի-աղյուսակ, դիդակտիկ խաղ)

8) Յուրաքանչյուր գլխում ներկայացված են դասերի հիմնական կետերը, ոչ թե դասի պլաններ:

9) Աշխատանքը չծանրաբեռնելու նպատակով հավելվածում տեղադրված են լրացուցիչ նյութեր:

Ուսուցչի անհատական մոտեցումը կարող է և ընդունելի չլինել այլ մանկավարժի համար: Սա հետազոտություն է, որով առաջարկում ենք ավանդական դասաձևից անցնել ստեղծագործական, վերլուծական, աշակերտակենտրոն դասերի: Նշենք, որ աշակերտակենտրոն ասելով՝ նկատի ունենք՝ աշակերտին պահել ստեղծելու, ստեղծագործելու, մտածելու, սովորեցնելու, սովորող-առաջնորդի դերում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի ՈւՁ, 5-6, Երևան, 2011

2. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 5, Երևան, 2015

3. Մկրտչյան Գ., Տողանյան Ն., Մայրենի, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2009

4. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ, Գրականագիտական բառարան, Երևան, 1972

5.Սարգսյան Վ., «Արմանք-զարմանք այբբենական ընթերցարան», Երևան, 2013

6.Սարուխանյան Ռ., Գրականություն 4, Երևան, 2002

7. Ֆոպել Կ., Դադարի էներգիան (խմբ.՝Թ. Ալեքսանյան)

8. https://www.facebook.com/antaresmediaholding/posts/1526971864021320/

Հավելված

Հավելվածում ներկայացված են այն նյութերը, որ օգտագործել ենք դասաժամերին:

ՔՈՐՆԵԼԻ ԳՐԱՌՈՒ ՄՆԵՐԻ ՄԵԹՈԴ	
Ամիս, ամսաթիվ՝	
Դասի թեման՝	
Փաստեր	Մեկնաբանություններ

Ամփոփում	

Կլաուս Ֆոպել, Դադարի էներգիան/խմբ.՝Թ. Ալեքսանյան

Հրահանգ: Պատկերացրե՛ք, որ ժամանակի մեքենայով ամբողջ դասարանը տեղափոխվել է մի ուրիշ աշխարհ, ուր խոսում են միայն երկար ձայնավորներով, օրինակ՝ ԱԱԱԱԱ, ԻԻԻԻԻ,ՕՕՕՕ: Այս լեզվով խոսող մարդիկ կարող են իրենց զգացմունքները արտահայտել միայն հնչյունների տարբեր արտասանությամբ:

Փորձե՛ք ցույց տալ՝ ինչպես են այդ երկրի մարդիկ ասում, որ նրանք երջանիկ են: Ասե՛ք ինձ բոլոր ուրախ *Աաաա*-երը, ուրախ *Իիիիի*-երը, ուրախ *Էէէէէ*-երը, *Ուուուու*-երը, *Օոոո*-երը...

Ընդ որում՝ հետևե՛ք, որ երեխաները իսկապես զգացմունք դնեն հնչյունների մեջ: Թող երեխաները ձայներանգով արտահայտեն վախը, զայրույթը, տխրությունը, սերը, հուզվածությունը, հպարտությունը, հետքրքրվածությունը և այլն: Օգնե՛ք երեխաներին ուշադրություն դարձնելու, թե ինչպես է փոխվում նրանց դիրքը, դիմախաղը և ապրումները տարբեր զգացմունքներ արտահայտելիս:

Փոխվո՞ւմ է ձեր կեցվածքը, երբ դուք նոր զգացմունք եք արտահայտում, իսկ դեմքի արտահայտությո՞ւնը: Ինչպե՞ս եք դուք շնչում տարբեր զգացմունքների ժամանակ:

Վերջում Դուք կարող եք ինքներդ հերթով արտաբերել բոլոր ձայնավորները՝ ցույց տալով տարբեր զգացմունքների նրբերանգներ. ուրախ *Աաաա*, ապա տխուր *Էէէէ*...

Արտասովոր պատմություն

Նպատակը: Եթե Ձեր երեխաները ուրախությամբ երևակայում են, այս խաղը նրանց դուր կգա: Երեխաները պետք է վստահեն իրար և չվախենան ծիծաղելի երևալուց,

քանի որ նրանք պետք է ասեն կամ երգեն իրենց ստեղծագործածը: Հնարավոր է, որ դրա համար նրանց պետք է նախապատրաստել: Դա պետք է լինի այսպես. կարելի է, օրինակ, երեխաներին տալ 2 ձայնավոր և 3 բաղաձայն և առաջարկել մտածել՝ ինչպես այդ հնչյուններից կազմել տարբեր երկարության բառեր: Հետո երեխաները կսկսեն այդ բառերով նախադասություններ կազմել և բարձրաձայն կարդալ:

Սա իսկապես ստեղծագործական և հետաքրքիր խաղ է:

Անհրաժեշտ պարագաներ: Ամեն երեխայի պետք է փոքր քարտ, ուր նկարագրված կլինի որևէ կենցաղային իրադրություն, օրինակ. «Քո հեծանիվը խլել են» «Քո ականջը ցավում է», «Դու քեզ համար թխվածք ես գնում», «Քեզ սրսկում են արել», «Դու տնային աշխատանք ես կատարում», «Դու ֆուտբոլ ես նայում» և այլն:

Հրահանգներ: Ես ուզում եմ ձեզ առաջարկել մի սրամիտ խաղ: Բոլորդ շրջանով նստե՛ք, և թող յուրաքանչյուրը տուփից մի քարտ վերցնի: Քարտի վրա նկարագրված են տարբեր իրադրություններ, որ պատահում են կյանքում: Կարդացե՛ք՝ինչ է գրված քարտին: Հետո ձեզանից մեկը կկանգնի կենտրոնում և ցույց կտա իր քարտի վրա գրվածը: Դրա համար կարելի է տարբեր շարժումներ անել, «խոսել» ոտքերով ու ձեռքերով, բայց լեզվով խոսել չի կարելի: Կարելի է և պետք է օգտագործել նորաստեղծ բառեր, կեսը երգել, կեսը՝ասել: Մյուսները պետք է գուշակեն՝ինչ է ցույց տալիս երեխան: Հենց ճիշտ գուշակեն, կենտրոն է գալիս հաջորդ երեխան:

ՏԵՔՍՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄ

ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՊԱՏԿԵՐ	ԵՍ ԼՍՈՒՄ ԵՄ ՁԱՅՆ	ԵՍ ԶԳՈՒՄ ԵՄ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՐՔՈՒՅԿ

ՄԱՅՐԵՆԻ - 5

ԵՐԵՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ Հ.168 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ .....

Բարի գալուստ գիտելիքների զարմանահրաշ աշխարհ...

Սիրելի՛ բարեկամ, այս գրքույկի միջոցով մենք նոր գիտելիքներ ենք ձեռք բերելու: Այն լուռ ու խելացի ընկեր է, որ մեր կողքին է լինելու շատ կարևոր պահերին: Դու դրանում կհամոզվես, բարեկա՛մս:

Հարգանքներով՝ մայրենիի ուսուցչուհի Գիլավյան

Եղիշե Չարենց

Մեր լեզուն

Մերլեզունճկունէու***բարբարոս,****[24]
Առնական*է,կոպիտ,բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք ***փարոս****,
Վառված հրով անշեջ դարերում հին: —

Եվ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,
Հղկել * են այն դարեր, որպես մարմար,
Եվ փայլել է նա ***մերթ****, ինչպես ***բյուրեղ****,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին.
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ,
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր ***խոհ**** երի վրա ժանգ չչոքի:

◊◊◊

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը ***վառման****
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ՝ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած ***երկաթագիր****գրերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան յարն եմ սիրում:

---

[24] Աստղանիշով բառերը բացատրում ենք, գրում ենք գրքույկի ազատ տեղում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու*, Քուչակի * պես լուսապսակ ճակատ չկա,
Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

◊◊◊

Հովհաննես Շիրազ

Հայոց լեզուն

Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս,
Էլ ինչո՞վ ես հույսը բերդիս,
Էլ հայրենիք ինչու՞ եկար,
Թե պիտ խոսես օտար լեզվով,
Խմես հայոց գինին ***նեկտար****՝
Կենաց կանչես օտար լեզվով,
Քաղես հայոց վարդերն ու հեզ
Աղջիկ կանչես օտար լեզվով:

Իրավ*** քանի լեզու գիտես՝
Այնքան մարդ ես՝ իրավն ասին,
Բայց որ քո հայ լեզուն չունես,
Էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին,
Որ թողել ես քո մայրենին՝
Հարամ է քեզ հայոց գինին,
Հարամ է քեզ աղջիկն հայոց,
Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց:

Մայր հայրենինքն էլ ի՞նչ սրտով
Քո ոտքերն է գրկե վարդով...
...Ա~խ, չէ, Մասիսն հալալ է քեզ,
Հայոց վշտում դու մեղք չունես,
Հալալ է քեզ հողն հայրենի,
Թող քեզ ջուրն էլ դառնա գինի:
Քանզի հայոց ***վայ սփյուռքում****
Պանդխտությունն է դեռ պոկում
Հայ բերանից հայոց լեզուն,

Օտար հայոց մահն է ուզում…
Բայց նա է հայ, ով հովազի
Արնախում* * *երախում * էլ
Իր մայրենի լեզվով խոսի,
Ժխորում էլ **Բաբելոնի***
Խոսի լեզվով իր մայրենի.
Հայոց լեզվով, որ միշտ ջահել,

Մեզ ***բյուր*** *դարեր հայ է պահել:

◊◊◊

Համո Սահյան

Մեր լեզուն

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մէջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեր:

Մեր լեզուն արյունն է մեր,
Արյունից ավելի թանկ,
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք որ կանք:

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:

◊◊◊

Հայոց լեզուն

Քեզանով է պայթել ***հունդը****մեր գոյության,
Քեզանով ենք դարձել տուն ու երկիր,
Շառաչել ես դու հին հողում Արարատյան
Մինչև հնչյունը քո դարձել է գիր:
Դու ոգին ես եղել մեր ***եղեգան փողի****,
Ոգու կանչն ես եղել մեր պայքարող…
Կարող էինք ապրել անգամ առանց հողի,
Բայց առանց քեզ ապրել չէինք կարող:

Մերթ հնչել ես որպես կռվի կանչող շեփոր,
Մերթ հառաչել որպես սիրտը ցավոտ,
Հեքիաթներ ես հյուսել, ***առասպել****ու **էպոս****,
Ողբերգության մատյան, ***ասք****ու աղոթք:
Մերթ բուրել ես որպես **Վարդավառի** ծաղիկ,
Ճախարակի* թելն ես մերթ ոլորել,
Հայրեններ*են դարձել ***շարական*** * ու ***տաղի****,
Անտուններ*անտուն և **հորովել****…
Հինավուրց ու նորոգ դու իմ հայոց լեզու,
Դու ավելի փարթամ պիտի ծաղկես,
Երբ մեր երազն անգամ հայերեն է հյուսվում,
Էլ կարո՞ղ ենք ապրել մենք առանց քեզ:

◊◊◊

Պարույր Սևակ

Մայրենի լեզու

Դու մեր մեծ երթի գավազանակիր
Եվ մեր պատմության մեծագո՛յն ***դիվան****,
Մեր ազնվագույն գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու ***օթևան****:
Անցյալին պարզված դու մեր լսափող,
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված:
Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված ու յուղված:

Դաժան դարերի ամե՛ն մի ժամին
Շա՛տ բան է խլել մեզնից թշնամին:
Բարդելով վերքին վերք ու ***անարգանք*** *
Հեծության *վրա մի նոր հեծություն՝
Խլել է մեզնից հանգիստ ու հարգանք,
Խլել է մեզնից փառք ու մեծություն,
Խլել կյա՛նքը մեր և... կյանքի՛ց էլ թանկ
Մեր հո՛ղը, հո՛ղը,
Մեր սուրբ հայրենի՛ն:
Շատ բանից է մեզ զրկել վայրենին:
Մեր կերած հացին քսել է նա ժա՛նգ,
Բայց և... դարավոր բնիկ վայրերի
Կորստի ***լեղի*** *կարո՛տն է քսել,
Բայց մենք չենք զրկվել... մեր բերնի համից.
- Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,
Մեր հայրենահամ անուշ բարբառով:
.....

Մասո՞ւնք *: Ինչպե՞ս թե: Մասունքս ո՛րն է:

Մասունքի տեղը տուփն է կամ հորն է:

Իսկ դու՝դարավոր, բայց և առույգ ես,

Գիսավոր ծուխ ես, բայց և խարույկ ես,

Ինչքան պարզ՝նույնքան ասպետական ես,

Շատերի մեջ ես, բայց պետական ես,

Եվ դրանով իսկ դու պետքական ես....

◊◊◊

Խաչիկ Դաշտենց

Հայերեն

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,

Մեր շուրջը խոսում են այլորեն,

Եկ խոսենք, եղբայր իմ, հայերեն;

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,

Թույլ չտանք մեր լեզուն ավերեն,

Եկ խոսենք , միշտ խոսենք, հայերեն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,

Այդ սարը գալիս է դարերին,

Նա անվերջ խոսում է հայերեն:

Զավակիդ հայկազյան դպրոց տար,

Եկ գրենք մեսրոպյան տառերով,

Եկ խոսենք մեր անուշ բառերով:

Այս օտար աշխարհի ցրտերում

Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն,

Եկ վառենք ու վառվենք հայերեն:

◊◊◊

Հատված «Ռանչպարների կանչը» վեպից/ նաև՝ «Մամփրե արքա »/

Ա՛յբ, բե՛ն, գի՛մ,
Ե՛լ, Հովակիմ,
Դա՛, ե՛չ, զա՛,
Լծիր եզան:
Է՛, ը՛թ, թո՛,
Վեր կաց, Թաթո,
ժե՛, ինի՛, լյո՛ւն,
Կապիր քո շուն:
Խե՛, ծա՛, կե՛ն,
Ու՞ր է Հակեն:
Հո՛, ձա՛, ղա՛տ,

Միհրա՛ն, Միհրդա՛տ,
Ճե՛ն, մե՛ն, հի՛,
Կգանք հիմի:
Նո՛ւ, շա՛, ո՛,
Պրծիր, Շավո,
Չա՛, պե՛, ջե՛,
Ուշ է, Վաչե:
Ռա՛, սե՛, վե՛վ,
Ծագեց արև:
Տյո՛ւն, ռե՛, ցո՛,
Մարդ Աստծո:
Վյո՛ւն, փյո՛ւր, քե՛,
Քելե, Սրքե,
Ե՛վ, օ՛, ֆե՛,
Օ, ի՛նչ զով է:

Վահագն Դավթյան

Ներբող* մայրենի լեզվին

Դու՝ սեր առաջին, առաջին ***մորմոք***, առաջին աղոթք,

Որ տառապանքով փոխվեցիր բառի ու դարձար լեզու...

Ու երբ «Հայրենիք» անունը տվինք հողին այս քարոտ,

«Մայրենի» դրինք անունը քո սուրբ...

Եվ դու դարեդար մեզ շնորհեցիր կանչը քո արյան,

Համը քո հացի, եռքը քո գինու, ցոլքը քո հրի,

Տվիր պղնձե այս քարափների ***կռինչը*վայրագ****

Ու քնքշությունը լացող մամուռի:

Ու մենք դարձրինք քեզ երդում, ոգի, դարձրինք աստված

Թեև գիտեինք, որ աստվածները զոհ են պահանջում,

Եվ Ավարայրում ընկանք արնաքամ, ընկանք ծվատված,

Բայց չզիջեցինք և ոչ մի հնչյուն:

Եվ մենք քեզ համար, մեր մեսրոպատառ, խորհուրդ մեր խորին,

Եվ մենք քեզ համար, մեր մեծասքանչ, մեր ոսկեղենիկ,

Ելանք ազգովին, բռնեցինք ահեղ ճամփան ***Դեր-Զորի****,

Մեր կեսը տվինք, բայց քեզ չտվինք:

Քանզի գիտեինք, որ քեզ սրբորեն կոչել մայրենի,

Քեզանով ենք մենք դարեդար ***հառնել****, առել շունչ ու կյանք

Ու թե քեզ ***դավենք****, ուրեմն չունենք հող ու հայրենիք,

Ու թե քեզ դավենք, ուրեմն չկանք:

Եվ հիմա, հիմա, ***անթեղի**** նման քեզ պիտի տանենք,

Քեզ պիտի տանենք իբրև հրդեհից ազատված մանկան,

Հողմերից փրկված կանթեղի նման քեզ պիտի տանենք

Եվ տանենք իբրև երդում ու պատգամ:

Մեր տառերը

Տեսիլք*ից* են ծնվել տառերը մեր,

Հողմերով են սնվել տառերը մեր,

Զրդեղվել*են, դարձել երկաթագիր

Քարերին են գրվել տառերը մեր,

Երբ փորձել են ջնջել ու ***եղծանել****...

Կայծակին են տվել տառերը մեր..

ԱՍՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

❖

Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը **ղայիմ*** բռնեցեք»: Խաչատուր Աբովյան

❖

Հայերենը, իբրև Արարատյան լեզու, կոչվում է " Աղոթքի լեզու", այն աստվածային ճոխ ու աննման լեզու է:

Նիկողայոս Մառ

❖

Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնված լեզու է՝ բարձունքների ու խորությունների լեզու:

Ավ. Իսահակյան

❖

Գրաբարը.... ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն, պերճություն, ուժ, ճկունություն, այդ ամենը նոր եմ սկսում զգալ: Եվ ինչպիսի ձախորդությունների էլ հանդիպեմ, և որքան էլ ինձ համար դժվար լինի, ես պատրաստ եմ ամեն ինչի, միայն թե իրագործեմ երազանքս՝ կատարելապես ուսումնասիրեմ այդ արքայական լեզուն:

Վահան Տերյան

❖

Ես երջանիկ էի հայերեն խոսքի կարկաչյունով և ճարճատյունով: Ես լսում էի օտար խոսքը և հմայվում էի նրանով: իսկապես, կոշտի, շիկացածի և զարմանալիորեն փափուկի, քնքուշի ինչպիսի զուգադրում: Ինչպես կոշտ, այրված հողը և հյութալի պտուղը, որը հասունանում է նրա վրա:

Անդրեյ Բիտով (ռուս գրող)